



Թ. ԹՈՐՍԱՄԱՆՅԱՆ

Հ Ա Խ Փ Ս Ի Մ Ե



Թ. Թորսամանյան

Արդկային պատմովթյան հետ գրեթե համահավասար սկզբավում է ճարտարապետովթյան պատմովթյունը. և որչափ որ մարդկությունը քաղաքակրթական զարգացման և անկման շրջաններեւ անցել է, ճարտարապետական արվեստը ևս զուգահեռաբար ստեղծագործող ազգի ծագրիտ պատկերն է արտացոլել իր ետևը թուղած հուշարձանների վրա: Ահա այս իսկ պատճառով ավանդությունների և մագաղաթների տված պատմովթյունը թերի է համարվում, եթե չէ ուսումնասիրված զուգահեռաբար՝ անհետացող ազգերի ճարտարապետական կամ գեղարվեստական մնացորդները՝ իրենց անցած ճանապարհի վրա և այս վերջինն է, որ ավելի ճշմարտապատում և հարազատ պատկերն է տալիս նույն ժողովրդի նկարագրին:

Տարակույս չկա, որ երկրագունդի վրա մարդկությունը հավասարապես չի զարգացիր. բաժանված զանազան ազգերի և ցեղե-

րի, ապրել են տարբեր երկրների մեջ և իրենց ապրած միջավայրի բնության և կլիմայական պայմանների համաձայն, ոմանք հասել են որոշ քաղաքակրթություն բարձրության, իսկ ոմանք մնացել են գրեթե նախնական կիսավայրենի վեճակի մեջ:

Բոլոր ճարտարապետական պատմաբանները ընդունում են, որ ուշ մասնավոր երկրի մեջ ճարտարապետովթյունը բոլորովին ինքնուրուցն կերպով չէ զարգացած, սահմանակից քաղաքակրթ պետովթյունները մեծ աղղիցություն են ունեցել տնտեսական կամ քաղաքական հարաբերությունների միջոցով. բայց և այնպես տեղական համայնքները ևս, օգտակարը և պիտանին փոխ առնելով հանդերձ, հետզհետեւ ստեղծել են իրենց սեփական արվեստը, փոխառյալները պատվաստելով իրենց սեփական ճաշակին համաձայն: Ահա այս պատճառով է, որ յուրաքանչյուր ազգ, ցեղ ունեցել են իրենց ինքնուրուցն ճարտարապետովթյունը, ոճերը,

գեղարվեստական ձևերը և շինեակերպերը, տեղական պայմանների, պահանջների և տեղում արտադրված շինանյութերի համաձաւ:

Շինանյութերի տեսակետով, մի տեղ քարը, սրբի տեղ փայտը ծառայել են իբրև շինանյութ. իսկ այս շինանյութերը չի գտնված երկիրներում ստեղծել են քարին և փայտին փոխարինող ուրիշ միջոցներ. հողը օգտագործել են իբրև շինանյութ, պատրաստելով նրանից թթված կամ անթործ աղյուսներ և նրանցով կանգնել են հսկայական շինումներ:

Կիսավայրինի մարդկության իբրև բնակարան օգտագործած քաղաքաբերից և խովերից սկսած մինչև մեր օրերի ճարտարապետական հրաշալիքներին համանելը, բազմաթիվ դարեր տեղցին, փոփոխակի անկումներով, վերածնություններով և փոխանցումներով և այդ ժամանակի երկար տևողության մեջ անթիվ սերունդներ մաշվեցին, միշտ նորը, նպատակահարժարը և ժամանակի պահանջների համաձայն ձևեր ստեղծագործելու ջիգեր թափելով:

Եղել են ստեղծագործող ազգեր ու ցեղներ, որոնք անակնկալ կերպով անհետացել են կամ ձուլվել քաղաքականապես ավելի զորող ազգերի մեջ: Սակայն երկրի նոր տեղերը, որդեգրելով հանդերձ իրենց նախորդների ստեղծագործած ճարտարապետական ավանդական ձևերը և նպատակահարժարը ու հանձարեղ շինեակերպերը, հինը անհանաչելի դառնալու շափ ալլավոխել և նոր վայիկը թրուներ տվել են, իրենց նորագույն բնորությունների և ցնցական պահանջների համաձայն:

Ճարտարապետության մեջ միևնույն հեղաշրջումները հաջախ պատահել են նաև այլպիսի ազգերի մեջ, որոնք թեև շարունակել են կյանքը, սակայն համակերպելով իրենց պահանջները և քաղաքական պարմանենքը: Այս վերջինիս պատճառ եղել են պատերազմները, գաղթականությունները և քաղաքական նվաճումները: Այս հեղաշրջումները երբեմն ավելի բարձրության հասցրին: Ճարտարապետական արվեստը, իսկ երբեմն, փառակիրական գլուխություններով, ծանրաբեռնացին շինեակերպերը շափություններում աղջուածական պարբերական պարմանջների համաձայն:

Ահա այս բազմաթիւնակ ճարտարապետական արվեստների պարբերական զարգացման և անկման ենթարժմար զարդարանքներով և հավելվածական մասերով, որով միանդամայն կորավ նախկին վեհել պարզությունը և դատապարտվելով վերջին ամերման:

Ժամանակի, շրջապատող քաղաքակիրթ մեծ ազգերի ազդեցության տակ, քանդեցավ ճարտարապետական արվեստի խանձարություն Սկսած նախաքրիստոնեական դարերից մինչև 14—15-րդ դարերը, առնվազն չորս անգամ անկումներ և վերածնություններ տեղի ունեցան ճարտարապետական արվեստի մեջ Հայաստանում:

Թե ի՞նչ ազգեցությունների և քաղաքական փոփոխությունների հետևանքով տեղի ունեցան այդ անկումներն ու վերածնությունները, առ այժմ իմ նապատակն դուրս է այդ մասին խոսել, միայն պետք է ասեմ, որ որոշ զարաշարանների մեջ, Հայաստանի անմիջական հարեւան ազգերի բարձրագույն աստիճանի հասած ճարտարապետական արվեստի արտադրությունների հետ, հայ ճարտարապետությունը, եթե ոչ ծավալով կամ քանակով, այնուամենայնիվ ավելի բարձր կանոննեց իր որակով որոշ կետերի մեջ, հակառակ իր փոքրությանը և տնտեսական համեստ վիճակին:

Երբեմնի բյուզանդական աշեղ կայսրությունը, որ վաթուն և չորս նահանգներ ունեն իր տիրապետության սահմանին մեջ, ճարտարապետական ասպարեզում կանոննեց մի Այա-Սոֆիա, որը հավիտենական կոթող եղավ երկու փոքր ասիացի ճարտարապետների՝ Անթեմիոսի և Պղտառի անվանություն: Հայաստանը, որ Բյուզանդիայի վաթուն և չորս նահանգներն մեջն էր միայն, բացառությամբ Այա-Սոֆիայի, կանոննեց իր փոքրիկ երկրին մեջ մի շարք այնպիսի ճարտարապետական կոթողներ, որոնք հավերժական ներբողներ են հայ ճարտարապետների և հայ արվեստագետների խորին Հմառության և գեղարվեստական ճաշակին:

Հայաստան գրեթե բնավ չի հատեց արևմտյան և բյուզանդական պաճուծանըներով ծանրաբեռնված և մի ժամանակ գրեթե համաշխարհային տիրապետություն ստացող ճարտարապետական ուներին: Վերոգրակ ուներին հազիվ մի քանի աղոտ շողբերը դարերի ընթացքում երևացին հայոց ճարտարապետության մեջ:

Հայաստան ընդգրկվեց արևելյան ճարտարապետությունը, և իր աղմբեստի վառարանը եղան հին ասորա-քաղեական և հին պարսկական ճարտարապետական աստիճանը, որոնց թեև հույս ընդորինակուր շեղավ, սակայն համակերպերին նրանց պարզությունն, հասատության և արտաքին անելիքնեթ վեհության: Ոչ արևմտյան շապանք ճամփությունը սիրեց, և ոչ արևելքի ցուրտ և անեղատեսիլ ոճը, արտադրեց միշտ իր բոլոր վերածնությունների

մեջ, պարզ, անպահույթ, սակայն անհամեմատ հաստատուն և բազմադարյան կյանք ունեցող շենքիր:

Հայ ճարտարապետության ամենամեծ գեղարվեստականությունը կկայանա անհամաշափ դասավորությամբ ուղղի և կոր գծերի ներդաշնակ կերպով միմյանց մեջ ձուլվելու ակնապարար երևութիւն մեջ: Եթե տեղ տեղ քանդակներ կամ զարդի երևույթ ունեցող կարկառումներ կերպին, նրանք զարդ լինելու ալելի, կամ խորհրդավոր նշանակություն ունին կամ որոշ դեր կառուցվածքի հաստատության մեջ:

Պարբերական վերածնությանց մեջ 7-րդ դարը հայ ճարտարապետության համար եղավ նշանակալից դար: Նախընթաց և հետագա վերածնություններից ոչ մեկը չի հավասարեցան 7-րդ դարու արվեստի բարձրության, զուտ տեղական ճաշակով և բազմակողմանի շինելակերպերով: Սակայն հետագա վերածնությունների մեջ ևս կան խիստ գեղարվեստական կոթողներ, որոնք իրենց մեջ ունեն նույնիսկ մեր ժամանակի համար ուսանելի շինելակերպեր: Եվ որ ավելին է, մինչև հայ ճարտարապետության վերջին անկումը, 7-րդ դարու ավանդական գծեր ընդդիշած պահպեցին առավել կամ նվազ շահվերով:

7-րդ դարու հայ ճարտարապետության մեջ հասած բազմաթիվ հսկա հուշարձաններ ունենք տակավին կանգն և մասամբ վնասված, որոնք բնության աճեղ պատահարների և մասնավորապես աճեղացուց երկրաշարժների կուրծք տալով, կանգուն մնացել են մինչև մեր օրերը. Եթե հարկ եղած խնամքը տարիի, դեռ կապրին երկար դարեր և կզարմացնեն ներկա գիտնական արվեստագետները, եթե ի. նկատի ունենանք այդ հուշարձանների կանգնված թվականները, հորում ալսօրվան քաղաքակիրթ եվրոպան խավարի մեջ խարիստում էր, այն ժամանակ ավելի ևս կպարտավորինք պահել այդ հուշարձանները, իբրև կենդանի վկաներ Հայաստանի ավելի մեծ քաղաքակրթությանը՝ քան եվրոպան:

Եթե ամենին համար գծմար է այսօր տեսնել երերուքը, Թավինը, Թալիշը, Արթիկը, Մըենը, Տիկորը և ուրիշ մեծ թլով 5-րդ և 7-րդ դարու հոյակապ հուշարձանները, ցանկացողները հեշտությամբ կարող են տեսնել վաղարշապատը իր շրջակա հին հուշարձաններով, որը ներկայիս գիտնական արվեստագետների ամենամեծ ցանկությունն է տեսնել այս շրջանի հնագիտական կոթողները և ամեն օր գրիթե պակաս չեն այցելուներ:

Վաղարշապատի մեջ 618 թվականին

կանգնված Հոփիսիմեի տաճարը տակավին կանգուն է, որը կարող է իրեւ ապացուց ծառայել 7-րդ դարու մեջ հայոց շինարարական արվեստի մեջ ունեցած հմտության և թե հայ ճարտարապետների գեղարվեստական նույրը ճաշակին: Ինձ շատ հեռուն կտաներ այստեղ արձանագրել ուս և ելքոպացի ականավոր ճարտարապետների և գիտնական արվեստագետների հիացմամբ լի ներբողական վկայությունները, ցանկացողները հեշտությամբ կարող են գտնել բազմաթիվ հատորների մեջ ոչ միայն դրվագիքներ, այլ և հմտալից ուսումնասիրություններ այս շենքին նվիրված:

Ինչի՞ համար այսքան դրվագիք և հիացական բացականչություններ Հոփիսիմեի նման բոլորովին պարզ և միանգամայն անզարդ շենքի համար ի տես այս կոթողին հիացում ազդողը և հանդիսատեսին հափշտակողը արտաքուստ միմյանց հակառակ ուղղությամբ, հորիզոնական և ուղղահայաց ուղիղ գծերի երբեմն աղեղներով խառն վեմ ներդաշնակությամբ օժտված գծերն են, որոնք իրենց բարձրության և լայնության մեջ այնպիսի շբնաղ դասավորություն ունեն, որ ամեն տեսակ քննադատությունից բարձր են մնում: Ներքին տեսքը թերևս ավելի շքեղ երևույթ ունի իր անօրինակ պարզությամբ՝ ինչպես արտաքինը. այստեղ, կառուցող հմուտ ճարտարապետի գիտական ակնբախ այնպիսի մի արժանիքն է գրավում ականատեսին, որ մեր այսօրվան թատրոնական ճարտարապետների նախանձը կշարժե, իր երկարատև և բարձրաձայն արձագանքներով:


Ծատերին առասպել պիտի թվեր գուցե այս շենքին հազար երեք հարյուր տարիից առաջ շինված լինելը, եթե չի լինեին երկու տեղով պատին մեջ հազցված արձանագրությունները, որոնց վրա փորագրված են շինողի անունը և շինության թվականը:

Մի՞թե մեր ժամանակակից արվեստագետների հնատաքրության նյութ պիտի չի լիներ և խորապես չի քննեին, թե զուտ տեղական տոփ քարով և պարզ կիր ու ավագով շաղախված մի շենքի ավելի քան տասն և երեք դար կանգուն մնալով գաղտնիքը ինչո՞ւմն էր և չի կարելի օգտագործել այս տեղական շինանյութերը այնպիս, ինչպես գործածել են ի հնում, որով գուցե կարողանանք թե խայողություն անել և թե երկար կյանք տալ մեր շենքերին:

Այս հազվագյուտ կոթողը, որ իրեն նախատիպ ունեցեր էր 5-րդ դարուն էջմիածնի տաճարը, նմանին տաճարը ձևափոխությունից պոաջ, և 6-րդ դարուն նվանի եկեղեցին, գե-

բազանցեց բոլոր իր նախորդներին, և իր նըրածաշական համար իր առաջնորդության մասին պատճեն է համարվում, հետագային, մոտավորապես երկու դար, իրեն օրինակ ծառայեց նորոգ կանգնված շինությունների՝ առավել կամ նվազ հաջողությամբ, թե Հայաստանի սահմաններից դուրս այլ երկրներում և թե նույնիսկ նրա սահմաններից դուրս այլ երկրներում։ Հոփասիմեի հարացատ ընդօրինակություններն են Հաջի-Ղարայի, Աղըլամանի, Երասխաձորի 7-րդ

մատնված լինելը, 1652—53 թվականներին էր, որ մի լուրջ նորոգություն կատարվեց արտաքին երեսին, կտորին և գմբեթի ծածրին վրա։ Այս թվականից հետո որպես թե վանահայրեր հսկում էին, սակայն, շատ քիչ բացառությամբ, օգտակար հղան շենքի ապահովության, Վերջին անգամ նորիմյանն էր, որ (1893—1907) նորածու գտնվեց անկեղծորին և մի մասնակի նորոգություն կատարեց, այս նորոգության ականատեսաները



Հոփասիմեի վանքը

դարու ու այլ բազմաթիվ հուշարձանները և Անիի Առաքելոց եկեղեցին 10-րդ դարում։ Եվ զարդանալի կերպով բոլոր այս շենքերը մինչև այսօր կանգուն են, բացի մեկից—Հաջի-Ղարայից, որի մնացորդ գմբեթի մասը դեռ երկու տարի առաջ ինկավ։

Բացի բնության արկածներից, քաղաքական փոթորկալի անցքերն ևս պակաս աղետներ չեն պատճառել Հոփասիմեի շենքին, սակայն համար կերպով կտրծք տալով վեճորեն կանգնել է այսօր, ի պարծանս կանգնող արվեստագիտների տաղանդին և քնքույզ ճաշակին։ 16-րդ դարու կեսից մինչև 17-րդ դարի առաջին կեսը հին մատենագիրները ողբում են նրա անտեղ ու քայլքայման վիճակի

վկայում են, որ վերին աստիճան խղճամիտ հնագիտական նորոգություն կատարեց, պահելով շենքի մեջ այն ամենը, ինչ որ պատմական և գեղարվեստական արժեք ունեին։ Վերջին ժամանակներս թեև որոշ շրափով գիտնական միաբաններ նշանակվեցին իրեն վանահայր, սակայն նրանք ևս ոչ մի ապացույց չի մողին այնտեղ իրենց երկարամյա դայության, և շենքը մնացել էր սախտի քմհաճութին։

Տաճարի արևմտյան ճակատի երկու պատուհաններուն տակ կտեսնվին անսովոր երկարությամբ քարեր։ Ահա այս երկար քարերը եղեր են մուտքի վերնասյամերը, այլապես ուրիշ պատճառ չկար այդ արտա-

կարգ երկարությամբ քարերը կատարչալ համաշափորեն զետեղելու պատուհաններեն ցած:

Ճշմարիտ է, որ նախնական շինության մեջ գործածված են երկար քարեր, բայց "Ն երբեք նույն անսովոր շափերով: Սույն քարերուն ներքեն, արդեն պարզ ակնարկով կտեսնվի, թե ինչպես վերեն մինչև վար, գործի դռան՝ իր բարավորներով հանդերձ գրաված տարածության շափով շարքերը խառնված և տգեղ կարկատանի վերածված են: Նույնպես նաև քարերու տեսակը կհամապատասխանե հետնագույն նորոգությանց ժամանակ գործածված կարմրագույն քարերուն, մինչդեռ շատ հիները բոլորովին սև քարերով են շինված: Հյուսիս արևմտյան ճակատին վրա բոլորովին պարզ է դռան չայնության շափն ալ բարավորներով միասին: Հավանականաբար մաշված բարավորներն, երբ վերցուցեր են անոր հաջորդող քարերը, անվնաս գտնելով շարեր են միմիայն դռան գրաված տարածության վրա, որով շատ պարզ մնացեր են դռան երկու կողմի բարավորներուն պատի քարերուն հետ միացման գիծը վերեն մինչև վար մեկ ուղղության վրա:

Արևելյան ճակատի հյուսիսային կողմի պատուհանին տակ մնացեր է մի քար, որ ցուց կուտա, թե այս կողմի դուռը կիսաբոլորակ կամարակապ եղած է. անշուշտ ունե-

ցեր է տուլուրե-ով կամ պարզ կամար, որոն աղեղի կորության վրա հանգչող որմաքանի ծալրն է այժմյան երկցած աղեղը որմաքացին վրա:

Այս պատուհանին հանդիպակաց կողմին վրա դռան հայտնի նշան չկա, որովհետեւ բոլորովին փոխված են քարերը, սակայն հարավային ճակատին վրա բարավանին կասկածելի նշաններ ցուց կուտան, թե այստեղ ալ եղած լինի երբեմն մի դուռ, ինչպես Բագարանի եկեղեցին:

Բագարանի եկեղեցիին արևելյան հարավային անկյունը, որ ի հնումն սենյակ է եղեր, երկու դուռ ունի, մինչ արևելյան կողմեն, մյուած՝ հարավային կողմեն, որոնք մինչև այսօր պահված են, ինչպես արևելյան ճակատի հյուսիսային կողմին դուռը: Դեռ Բագարանի հետազոտություննեն դարձիս ևս տաեցի մի հոդված այս մասին, բայց հոդվածիս կեսը զանազան պատճառներով անտիպ մնաց. այս հոդվածին մեջ կհայտնեն կարծիքներս և որոշ ապացուցներս այն մասին, որ Բագարանի եկեղեցին ալ ընդուրինակություն էր էջմիածնի հնագույն ճեմին*):

*) Ականավոր ճարտարապետ Թ. Թորամանյանի սույն անտիպ աշխատությունը վերցրել ենք տպագրության համար պատրաստված նրա աշխատությունների ծոլովածուի Բ հատորից:

